ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԻՍՈՒՆ ՏԱՐԻՆ

Ա. Մ. ՈՍԿԱՆՅԱՆ, Ռ. Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Սովետական Միության ժողովուրդները, ամբողջ աշխարհի առաջավոր մարդկությունը այս տարի տոնում են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակը։

Հիսուն տարի առաջ, 1917 թ. հոկտեմբերին, Ռուսաստանի ապստամբած բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիության հետ ամուր դաշինք կնքած, կոմունիստների փառապանծ կուսակցության ղեկավարությամբ և պրոլետարական հեղափոխության չգերազանցված հանճար Վլադիմիր Իլյիչ Լենինի առաջնորդությամբ մեր երկրում տապալեց կապիտալիստների ու կալվածատերերի ատելի իրավակարգը և հռչակեց սովետական իշխանություն։ Հոկտեմբերյան հեղափոխության գոռ թնդյունները ազդարարեցին մարդկային հասարակության պատմության նոր դարաշրջանի սկիզբը, այն դարաշրջանի, որի հիմնական բովանդակությունը կապիտալիզմից հեղափոխական ճանապարհով սոցիալիզմին անցնելու պրոցեսն է։

Սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում և կոմունիզմի կառուցման արդեն իսկ սկսված պրոցեսը հանդիսանում են մարքսիստական-լենինյան ուսմունքի ճշմարտացիության և կենսունակության փայլուն օրինակները։ «Անցած տասնամյակներում Հոկտեմբերյան հեղափոխության գործը պատմական հաստատման ստուգում է անցել, ցույց է տվել իր անհաղթահարելի ուժը, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների անանց նշանակությունը, ինչպես մեր երկրի համար, այնպես էլ ամբողջ մոլորակի ժողովուրդների համար»[1]։

* * *

Անցած կես դարը լի էր սոցիալիզմ և կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդի լարված պայքարով ու տիտանական աշխատանքով։ Տնտեսական վերելքը, որ զուգորդվում էր ժողովրդի բարեկեցության աճի և նրա սոցիալիստական կուլտուրայի ծաղկման հետ, հանգեցրեց կյանքի սովետական տիպի ստեղծմանը, որն արմատապես տարբերվում է ինչպես ցարական Ռուսաստանի, այնպես էլ ժամանակակից բուրժուական երկրների բնակչության կենսաձևանակից։ Դասակարգային անտագոնիզմի վերացումը, մարդկանց փաստա-

---

1 *Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին։ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի թեզիսները (հետագայում՝ Թեզիսներ), Երևան, 1967, էջ 3։*

կան իրավահավասարությունը, անձնական խելացի նպատակներին հասնելու աղատությունը, ամբողջ հասարակական կյանքի դեմոկրատացումը, վերջապես՝ կոլեկտիվիզմի ու փոխադարձ օգնության սկզբունքների տիրապետումը մարդկային փոխհարաբերությունների մեջ,— այս ամենը կոնկրետ իմաստ, միս ու արյուն տվեցին այն սոցիալական ու բարոյական արժեքներին, որոնք դասակարգային հասարակության պատմության նախորդ հաղարամյակների ընթացքում տեղ ունեին միայն գաղափարների, այն էլ՝ մեծ մասամբ ուտոպիստական գաղափարների ոլորտում։ Սոցիալիստական իդեալը բաղում դարեր մնում էր որպես աշխատավոր մարդկանց և առաջավոր մտածողների բաղձալի երազանք։ Անտիկ աշխարհից ժառանգելով «հերոսական դարաշրջանի», «Ոսկեդարի» հասարակական ներդաշնակության մասին իր պատկերացումները, ուտոպիզմը զարգացման տարբեր փուլեր անցավ, միշտ էլ մնալով որպես «օպոզիցիոն տրամադրությունների արտահայտության ձև»[2]։ Բայց նույնիսկ ուտոպիստ-սոցիալիստներ Օուենի, Ֆուրյեի և Կաբեի այն հետևորդները, որոնք իրենց կոմունիստական համայնքներն էին ստեղծում, արդեն անցյալ դարի երկրորդ կեսին ստիպված էին հրաժարվել իրենց նախաձեռնությունից։ Նրանց փորձերը, որ հիմնված էին այն հավատի վրա, թե սոցիալիզմը հնարավոր է իրականացնել լոկ համոզելու միջոցով, մնում էին որպես «ոչ-քաղաքական սոցիալիզմ»[3] և դասակարգային պայքարի ուժեղացման հետևանքով իրենց տեղը պետք է զիջեին պրոլետարական մասսաների հեղափոխական մարտերին։

Իմպերիալիզմի դարաշրջանի հեղափոխական մարտերը դեռևս պրոլետարիատին չէին մղել դասակարգային պայքարի առաջավոր դիրքերը, երբ գիտական կոմունիզմի տեսությունը արդեն մշակել էր իր ուսմունքը պրոլետարիատի՝ որպես այն միակ դասակարգի մասին, որը բուրժուական հասարակարգում գրաված իր դիրքի շնորհիվ ընդունակ է համախմբել բոլոր շահագործվողներին և գրոհի տանել նրանց կապիտալիզմի դեմ՝ հանուն նոր, կոմունիստական հասարակարգի ստեղծման։ Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Մարքսն ու Էնգելսը հանձինս պրոլետարիատի և նրա դասակարգային պայքարի տեսնում էին հասարակության առաջընթաց զարգացման գլխավոր ուժը։

Պատմական նոր պայմաններում Լենինը համակողմանիորեն մշակեց այդ աղետագրական պայքարում պրոլետարիատի հեգեմոնիայի և սոցիալիզմի կառուցման գործում նրա դերի մասին ուսմունքը։ Լենինը սովորեցնում էր, որ շատ տասնամյակների ընթացքում կապիտալի դեմ մղած իր պայքարում և խոշոր արդյունաբերական արտադրության մեջ միաձուլված, դաստիարակված և կոփված պրոլետարիատը ի վիճակի է ղեկավարել բոլոր աշխատավորներին՝ շահագործողների իշխանությանը վերջ տալու համար մղած նրանց պայքարում և որ նրա պատմականորեն պայմանավորված այդ ընդունակությունը կապիտալիստական խոշոր արտադրության նյութական պայմանների արգասիքն է։

Պատմությունը փայլուն կերպով ապացուցեց լենինյան այս դրույթների ճշմարտացիությունը։ Ռուսաստանի պրոլետարիատը, որին ղեկավարում էր կո-

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 697։
3 Նույն տեղում, հատ. 4, էջ 215։

մունիստների լենինյան կուսակցությունը, այդ ժամանակի միակ նոր տիպի կուսակցությունը, գլխավորեց երկրի բոլոր աշխատավորների հեղափոխությունը, 1917 թ. հոկտեմբերին նվաճեց երկրի քաղաքական իշխանությունը և հիմնեց իր դիկտատուրան, որը լիովին համապատասխանում էր աշխատավոր ողջ ժողովրդի ամենակենսական շահերին: Դա այն հսկայական քաղաքական, սոցիալական ու տնտեսական վերափոխումների սկիզբն էր, որոնց իրականացմանը իրենց բոլոր ուժերը նվիրեցին հետագայում մեր կուսակցությունն ու ժողովուրդը:

Հեղափոխական պայքարի դեռևս այդ սկզբնական փուլում հաստատվեց Լենինի այն դրույթի ճշմարտացիությունը, որ հասարակության հեղափոխական վերափոխման համար մղվող պայքարի ընթացքում պրոլետարիատի ստեղծագործական ունակությունները ի հայտ կբերեն իրենց հրաշագործ ուժը և կստանան համակողմանի զարգացում: Այդպես էլ եղավ, և հենց դրա շնորհիվ էլ պատմությանը հայտնի բոլոր նախորդ հեղափոխական ելույթները ոչ մի չափով չեն կարող համեմատվել հոկտեմբերյան հսկա պայթյունի հետ: Եվ բնական է, որ հոկտեմբերին կատարված դեպքերի ժամանակագրությունը իրավացիորեն ընկալվում է որպես հասարակական նոր սիստեմի ձևավորման ժամանակագրություն, իսկ այդ դեպքերը՝ որպես հին աշխարհը որակապես նոր տիպի քաղաքակրթությունից բաժանող սահմանագիծ:

Ճգնաժամային այն օրերին հասարակական բոլոր հակամարտությունները ծայրահեղորեն սրված էին. սոցիալական բոլոր խմբերը ձգտում էին թեկուզ ուժերի առավելագույն լարման գնով իրականացնել իրենց դասակարգային սկզբունքները:

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո երկրում ստեղծված քաղաքական անկայուն վիճակը, տնտեսության ու բանակի քայքայումը փետրվարից մինչև հոկտեմբեր ընկած ժամանակամիջոցում, հակաժողովրդական ու ռեակցիոն ժամանակավոր կառավարության մինիստրների դավաճանելը ժողովրդի շահերին, պատերազմի տարիներին ծայր առած ու հետզհետե խորացող աղքատությունն ու թշվառությունը,—այս ամենը ավելի ու ավելի ակնառու էին դարձնում, որ անհրաժեշտ են վճռական գործողություններ: Միակ հասարակական-քաղաքական ուժը, որ ի վիճակի էր այդ օրերին համախմբել, մոբիլիզացնել ու գլխավորել հեղափոխական բոլոր ուժերը և պայքարի տանել նրանց շահագործողական կարգերի դեմ, դա բոլշևիկների լենինյան կուսակցությունն էր:

Ընդհանուր զինված ապստամբությունից դեռևս չորս ամիս առաջ բոլշևիկների կուսակցությունը իր VI համագումարում հստակորեն որոշել էր դեպի սոցիալիստական հեղափոխություն տանող իր կուրսը:

Լենինի մշակած տակտիկայի հիման վրա VI համագումարը, ելնելով հուլիսյան օրերին պրոլետարիատի ժամանակավոր պարտության և փաստական իշխանությունը հակահեղափոխության ձեռքն անցնելու հետևանքով երկրում ստեղծված իրավիճակից, մշակեց իր քաղաքական նոր գիծը: Իր որոշումներում համագումարը նշում էր, որ տնտեսական փլուզումից ու իմպերիալիստական պատերազմից դուրս գալու և Ռուսաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը ապահովելու միակ ճշմարիտ ուղին սոցիալիստական հեղափոխությունն է: «Քաղաքական դրության մասին» համագումարի որոշման մեջ ասված էր. «Միայն հեղափոխական պրոլետարիատն է ի վիճակի, եթե նրան

աջակցի չքավոր գյուղացիությունը, կատարել այդ խնդիրը, որը հանդիսանում է նոր վերելքի խնդիրը»[4]։

Կուսակցությունը թևակոխեց իր զարգացման նոր էտապը. սոցիալիզմի գաղափարների պրոպագանդի և պրոլետարական հեղափոխության ուժերի նախապատրաստման ժամանակաշրջանը իր տեղը զիջեց սոցիալիզմի գաղափարները գործնականորեն կյանքում իրականացնելու ժամանակաշրջանին։

Երբ վրա հասան պատմական օրերը, յուրաքանչյուր ժամ կարող էին վճռական դեպքեր կատարվել, մանավանդ որ ժամանակավոր կառավարությունը բացեիբաց հանդես եկավ հեղափոխության դեմ։ Այդ պայմաններում հատկապես մեծ նշանակություն էր ստանում զինված ապստամբության ընթացքի օպերատիվ ղեկավարությունը։

Արդեն հոկտեմբերի 21-ին (նոյեմբերի 6-ին) Պետերբուրգի կոմիտեն ընդունեց մի որոշում, որը դարձավ կուսակցության գործունեության ծրագիրը։ Այդ որոշումը խնդիր էր դնում անմիջապես տապալել ժամանակավոր կառավարությունը և իշխանությունը կենտրոնում ու տեղերում հանձնել բանվորների ու գյուղացիների սովետներին։ Որոշման մեջ նշված էր, որ կոմիտեն «անհրաժեշտ է համարում առանց փոքրագույն հապաղման հարձակման անցնել հեղափոխության ողջ կազմակերպված ուժով»[5]։

Ընթացիկ մոմենտին նույնպիսի գնահատական էր տրված նաև Ռազմահեղափոխական կոմիտեի հոկտեմբերի 24-ին Պետրոգրադի բնակչությանն ուղղված կոչի մեջ. «Հակահեղափոխությունը բարձրացրել է իր չարագործ գլուխը։ Զինվորների, բանվորների և գյուղացիների բոլոր նվաճումներին ու հույսերին մեծ վտանգ է սպառնում։ Բայց... դավադրությունը կջախջախվի։ Ոչ մի տատանում և կասկածամտություն։ Ամրություն, կայունություն, տոկունություն, վճռականություն։ Կենցե՛ղ հեղափոխությունը»[6]։

Իշխանությունը գրավելու պլանի իրականացմանը խանգարում էին ոչ միայն ժամանակավոր կառավարությանը դեռևս հավատարիմ զորամասերի դիմադրությունը և մենշևիկների դեմագոգիկ մանևրները, այլև Կենտկոմի որոշ անդամների «պաշտպանողական-սպասողական» տակտիկան ու ռազմահեղափոխական կոմիտեի կազմում գտնվող ձախ էսեռների գործունեությունը։ Պատմական մոմենտը թելադրում էր գործել արագորեն ու համարձակ։

Հեղափոխությունն մեծ առաջնորդ Լենինի հոկտեմբերի 24-ի հայտնի նամակը, որ հասցեագրված էր Կենտկոմի անդամներին, պարունակում է պայքարի լարվածությունն ու զինված ելույթը մինչև վերջ հասցնելու մեծագույն վճռականությունը արտացոլող հետևյալ հուշակավոր դրվագները. «Սպասել չի՛ կարելի։ Կարելի է կորցնել ամե՛ն ինչ։ ...Ելույթն ուշացնելը մահվա՛ն է հավասար»[7]։

Դեպքերը զարգանում էին մեծ արագությամբ, պլանաչափ կերպով իրականանում էր ապստամբության Լենինի մշակած ծրագիրը։ Ու հենց այդ գիշեր էլ Սմոլնու դահլիճում բացվեց բանվորական և զինվորական պատգամավոր-

---

[4] ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում (հետագայում՝ ՍՄԿԿ-ն... որոշումներում), Երևան, 1954, I մաս, էջ 474։

[5] Октябрьское вооруженное восстание в Петрограде. Документы и материалы. Госполитиздат, М., 1957, էջ 287։

[6] Նույն տեղում, էջ 290։

[7] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 278—280։

ների Պետրոգրադի սովետի արտակարգ նիստը, ուր Լենինը հայտարարեց. «Ընկերնե՛ր։ Բանվորական և գյուղացիական հեղափոխությունը, որի անհրաժեշտության մասին միշտ խոսում էին բոլշևիկները, կատարվեց»[8]։ Հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) երեկոյան «Ավրորա»-ի կրակոցով սկսվեց գրոհը Ձմեռային պալատի վրա, ուր ձերբակալվեցին «մինիստր-նախագահ» Կերենսկու կողմից լքված ու փաստորեն անգործության մատնված ժամանակավոր կառավարության անդամները։ «Ավրորա»-ի համազարկից երկու ժամ հետո բացվեց բանվորական ու զինվորական պատգամավորների սովետների երկրորդ համառուսական համագումարը, ուր Լունաչարսկին հրապարակեց Լենինի գրած պատմական փաստաթուղթը. «Հենվելով բանվորների, զինվորների և գյուղացիների հսկայական մեծամասնության կամքի վրա, հենվելով Պետրոգրադում բանվորների և կայազորի կատարած հաղթական ապստամբության վրա, համագումարն իր ձեռքն է առնում իշխանությունը»[9]։

Բոլշևիկյան կուսակցության ջանքերով համակողմանիորեն կազմակերպված հեղափոխությունը հաղթեց արագ ու համարյա անարյուն։ Սակայն հակահեղափոխության պարտված ուժերը ամեն կերպ ձգտում էին վերադարձնել երկրի քաղաքական ու տնտեսական կյանքում իրենց կորցրած դիրքերը։ Ահա թե ինչու հեղափոխությունը պետք է պաշտպաներ իր նվաճումները իր ծնընդյան առաջին իսկ օրվանից։

Սպիտակգվարդիական զորքերը շարժվեցին դեպի Պետրոգրադ։ Հոկտեմբերի 25-ի առավոտյան գեներալ Կրասնովը, որի մոտ ապաստան էր գտել Կերենսկին, հրամայեց գրոհել հեղափոխական մայրաքաղաքի վրա։ Թիկունքից հարված էր պատրաստում «Հայրենիքի և հեղափոխության փրկության կոմիտեի» հակահեղափոխական ղեկավարությունը։ Բայց ոչ մի ուժ չկարողացավ կասեցնել հեղափոխության բարձրացող ալիքը. «Փրկության կոմիտեն» պարտվեց չորս օր հետո, հինգերորդ օրը ձախողվեց Կերենսկու—Կրասնովի արշավանքը, իսկ տասներկուերորդ օրը նշանավորվեց բոլշևիկ-լենինյանների հաղթանակով հակալենինյան ֆրակցիայի նկատմամբ, որը ձգտում էր պառակտել հեղափոխական ուժերը և դրանով իսկ լուրջ վտանգ էր հանդիսանում նորաստեղծ սովետական իշխանության համար[10]։

Հակահեղափոխական ուժերի չախչախումը 1917—1918 թթ. ձմռան ամիսների ընթացքում և բոլշևիկների կուսակցության ներսում կապիտուլյանտների ու ֆրակցիոներների մերկացումը լայն ճանապարհ բաց արեցին ամբողջ Երկրով մեկ հեղափոխության հաղթական երթի համար։

Հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում ցնցեց ամբողջ աշխարհը։ Համաշխարհային հասարակական կարծիքը զարմացել էր այն վճռականությամբ ու սկզբունքային հետևողականությամբ, որոնցով ղեկավարվում էր նորաստեղծ սովետական իշխանությունը։

Անմոռանալի դեպքերով հարուստ այդ օրերին սովետների համառուսական երկրորդ համագումարի ընդունած դեկրետները պարզ ու մեկին խոսում էին այն նպատակների մասին, որ սովետական իշխանությունը դրել էր իր առաջ։

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 284։
9 Նույն տեղում, էջ 293։
10 Տե՛ս ՍՄԿԿ-ն... որոշումներում, I մաս, էջ 507։

Ռուսաստանի աշխատավոր ժողովուրդը, որ ծայր աստիճան հոգնել էր պատերազմից ու շնչահեղձ էր լինում տնտեսական փլուզման հետևանքով, ամենից առաջ սպասում էր այն բանին, թե ինչ դիրք կբռնի նոր իշխանությունը ժամանակի ամենահրատապ խնդրի՝ պատերազմի ու խաղաղության հարցի վերաբերյալ։ Արտահայտելով աշխարհի բազմամիլիոն հասարակ մարդկանց ամենանվիրական ցանկությունը, Լենինը իր առաջին զեկուցումը համագումարում նվիրեց խաղաղության հարցին։ Հեղափոխության մեծ առաջնորդը համագումարին առաջարկեց ընդունել խաղաղության մասին հռչակավոր դեկրետը, որի մեջ շարադրված էր բոլշևիկյան ծրագիրը առանց անեքսիաների ու կոնտրիբուցիաների անհապաղ համընդհանուր դեմոկրատական խաղաղություն կնքելու մասին։ Այս դեկրետով հաստատվեցին պետությունների փոխհարաբերության այն նոր սկզբունքները, որոնք հիմնված են բոլոր ժողովուրդների փոխադարձ հավասարության և սուվերենիտետի վրա։

Խաղաղության մասին դեկրետը ընդունելուց հետո համագումարը լսեց Լենինի զեկուցումը հողային հարցի վերաբերյալ և ընդունեց իր երկրորդ պատմական որոշումը՝ դեկրետը հողի մասին։ Այդ կարևորագույն օրենսդրական ակտով ավելի քան 150 միլիոն հեկտար հող հանձնվում էր գյուղացիներին։

Խաղաղության և հողի մասին դեկրետները տարածվեցին ամբողջ երկրով մեկ։ Նրանք շուտով հայտնի դարձան նաև ողջ աշխարհին, արձագանք գտնելով հարյուր միլիոնավոր աշխատավոր մարդկանց սրտերում։ Սովետական իշխանության այդ առաջին դեկրետները հանդիսացան երկրի աշխատավոր դասակարգերի դաշինքի ամրապնդման հզոր խթան, հսկայական չափերով ոգնեցին տեղերում սովետական կարգերի հաղթանակի ու կայունացման գործին, մոբիլիզացրին բոլոր աշխատավորների ուժերը՝ հանուն հեղափոխության հաղթանակի նրանց մղած մարտերում։ Այդ դեկրետների շնորհիվ մեծապես աճեց Արևմուտքի ու Արևելքի պրոգրեսիվ ուժերի համակրանքը դեպի այն ժողովուրդը, որն իր վրա էր վերցրել պատմական մեծագույն միսիան՝ աշխարհում առաջին սոցիալիստական պետության ստեղծումը։

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որը մեր երկրում ոչնչացրեց կապիտալիզմը և մարդու շահագործումը մարդու կողմից, բացեց հասարակության պատմության նոր, սոցիալիստական դարաշրջանը։ Կապիտալիստական սիստեմից լայնածավալ ու հարուստ, թեպետև առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով քայքայված, Ռուսաստանի դուրս գալը հսկայական ազդեցություն ունեցավ ամբողջ մարդկության պատմական զարգացման հետագա պրոցեսի վրա։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համաշխարհային-պատմական նշանակությունը միանգամից չէ, որ հասկանալի դարձավ բոլորի համար։ Սակայն Արևմուտքի առաջավոր մտածողները, գիտության ու կուլտուրայի առավել պրոգրեսիվ ներկայացուցիչները հենց սկզբից ողջունեցին սովետական կարգերի հաղթանակը, համարելով դա մի խոշոր քայլ սոցիալական առաջընթացի բնագավառում։ «Ռուս հեղափոխականների հաղթանակը,— գրում էր Ռոմեն Ռոլանը 1917 թ.,— մեզ թվում է մի վճռական իրադարձություն Եվրոպայի ողջ ապագայի համար։ Հեղափոխությունը

նրա վրա մոգական ազդեցություն ունեցավ»[11]: Նույնիսկ Բերտրան Ռասելը, որ այն ժամանակ «դիլդիակսն սոցիալիզմի» դիրքերից ժխտում էր դասակարգային պայքարը, գտնում էր, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը համաշխարհային մասշտաբով բաց է անում կոմունիզմի դարաշրջանը: Նա ուղղակի հայտարարեց, որ կողմնակից է «ռուսական հեղափոխության ամենակարևոր ասպեկտին՝ կոմունիզմը կյանքում իրականացնելու փորձին»: «Ես գտնում եմ,—գրում էր նա,—որ կոմունիզմը անհրաժեշտ է աշխարհին»[12]: Մեր երկրի հին հասարակարգի հեղափոխական խորտակումը նույնքան բարձր էր գնահատում նաև Ջավահարլալ Ներուն: «Սովետական հեղափոխությունը,—գրում էր նա,—մեծ չափով առաջ մղեց մարդկային հասարակությանը և վառեց մի փայլուն կրակ, որն անհնար է հանգցնել: Նա դրեց այն նոր քաղաքակրթության հիմքը, դեպի որը կարող է ընթանալ աշխարհը»[13]:

Համաշխարհային հասարակական կարծիքը, իհարկե, չէր կարող չարձագանքել հեղափոխական ժողովրդի պայքարի պաթոսին: Բայց պայքարը չէր վերջանում իշխող շահագործողական դասակարգերի տապալմամբ. հաղթանակած հեղափոխական մասսաների հիմնական խնդիրը նորի կառուցումն էր: Լենինյան կուսակցությունը նվաճված պետական իշխանությունը համարում էր լոկ միջոց բանվոր դասակարգի համաշխարհային-պատմական միսիան իրականացնելու համար: Երկրի բոլոր աշխատավորների հետ դաշինք կնքելով, բանվոր դասակարգը նվաճում է պետական իշխանությունը և բանվոր դասակարգի կուսակցությունը կառավարող կուսակցություն է դառնում ոչ թե դասակարգային գերիշխանությունը հավերժացնելու համար, այլ հանուն այն բանի, որպեսզի պայքարով ու շինարարությամբ ստեղծի շահագործումից ազատ անդասակարգ հասարակություն: Թե ինչպիսին կլինի ճանապարհը, ինչ կոնկրետ փուլերով պետք է անցնեն սովետական ժարդիկ նոր հասարակարգի հիմքերը դնելու համար,—այդ ժամանակ կոմունիստներից ոչ ոք չգիտեր և գիտենալ չէր կարող, իսկ մարքսիստական տեսությունը պատրաստի դեղատոմսեր չի տալիս կյանքի բոլոր պարագաների համար. նա պահանջում է ստեղծագործաբար որոնել առաջացող պրոբլեմների լուծման ճիշտ ուղիները՝ ղեկավարվելով մատերիալիստական դիալեկտիկայի սկզբունքներով: Ահա թե ինչու պրակտիկ խնդիրների լուծման հնարավոր բազմաթիվ եղանակներից լավագույնի ընտրությունը հանդիսանում էր բոլշևիկյան կուսակցության ողջ գործունեության գլխավոր առանցքը և դժվարությունների կիզակետը. չպետք է մոռանալ, որ երկիրը կառավարելու խնդիրը մինչ այդ մարքսիստական ոչ մի կուսակցության առջև կանգնած չէր եղել:

Այս ամենի հետևանքով, սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման և իրականացման ընթացքում Լենինը ստիպված էր մեծ ուշադրություն նվիրել կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու և սոցիալիստական հասարակարգի զարգացման հիմնական, հանգուցային հարցերի մշակմանը:

Լենինի գլխավորած սովետական իշխանությունը հողային հարցը լուծելուց հետո, հեղափոխության առաջին իսկ ամիսներին, իրականացրեց խոշոր ու միջին բուրժուազիայի էքսպրոպրիացիան, պետության ձեռքում կենտրո-

---

[11] Տե՛ս Ռ. Ռոլլան. Из дневников и писем. Журнал „Иностранная литература", 1955, № 1, էջ 128.

[12] B. Russel. The Practice and theory of Bolshevism. London. 1920. էջ 22.

[13] Дж. Неру. Открытие Индии. Пер. с англ., М., 1955, էջ 24.

նացնելով տնտեսության իշխող բարձունքները, հոչակեց և ապա գործնականում իրականացրեց երկրի բոլոր ազգությունների իրավահավասարության սկզբունքը, ամրապնդեց բանվորագյուղացիական դաշինքը, պայմաններ ստեղծեց լայն դեմոկրատիայի և աշխատավորներին երկրի կառավարման գործում ներգրավելու համար։ Այս կարևորագույն սոցիալ-տնտեսական ու քաղաքական միջոցառումների շնորհիվ ստեղծվեցին սոցիալիստական հետագա շինարարության հուսալի ելակետեր։

Խոսելով երկրի սոցիալիստական վերակառուցման ասպարեզում ձեռք բերված նախնական հաջողությունների մասին, Լենինը որպես մեծագույն նվաճում նշում էր «...այն, որ մենք գործնականապես կիպ մոտեցել ենք այն խնդիրներին, որոնք առաջ դրվում էին վերացականորեն, թեորիապես։ Այս փորձը,— գրում էր նա,— չի մոռացվի։ Ինչ էլ կատարվելու լինի, որքան էլ որ ծանր լինեն ռուսական հեղափոխության և միջազգային սոցիալիստական հեղափոխության պերիպետիաները, այս փորձը չի կարելի խլել բանվորներից...։ Այդ փորձը մտավ պատմության մեջ իբրև սոցիալիզմի նվաճում, և ապագա միջազգային հեղափոխությունը այդ փորձի վրա է կառուցելու իր սոցիալիստական շենքը»[14]։

* * *

Ղեկավարվելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով ու հաշվի առնելով սոցիալիստական հասարակարգի զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, մարքսիստական տեսությունը միավորելով սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ, մոբիլիզացնելով երկրի բազմամիլիոն աշխատավորության ստեղծագործական եռանդը, կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը անցած հինգ տասնամյակների ընթացքում հետևողականորեն իրականացրին երկրի ողջ տնտեսական ու հասարակական կյանքի պլանաչափ սոցիալիստական վերափոխումը։ Դեռևս նախքան քաղաքացիական պատերազմի ավարտումը, տնտեսական փլուզման պայմաններում, երբ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը 1920 թ. կազմում էր նախապատերազմյան՝ առանց այն էլ խիստ ցածր մակարդակի մոտ կեսը, իսկ խոշոր արդյունաբերության արտադրանքը համարյա 7 անգամ պակաս էր նախահեղափոխական շրջանի համեմատությամբ, երբ գործարանների, ֆաբրիկաների, հանքահորերի, երկաթուղիների մեծ մասը քանդված էր կամ հումքի ու վառելիքի բացակայության պատճառով չէր աշխատում,— այդ ծանր պայմաններում կոմունիստական կուսակցությունը, նրա հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը գտնում էին, որ մեր երկրում սոցիալիզմ կառուցելու միակ հնարավոր ճանապարհը մեքենայացված խոշոր արդյունաբերության ստեղծումն է։

1918 թ. ապրիլին Լենինը իր «Տիտա-տեխնիկական աշխատանքների պլանի ուրվագիծ» հոդվածում գրում էր. գիտությունների ակադեմիան, որն սկսել է երկրի բնական արտադրողական ուժերի սիստեմատիկ ուսումնասիրությունը, պետք է անմիջապես կազմակերպի մի շարք հանձնաժողովներ՝ Ռուսաստանի արդյունաբերության վերակազմության և տնտեսական վերելքի պլանը մշակելու համար։ Լենինի մտահղացմամբ այդ պլանը պետք է նախատեսեր ար-

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 513։

գյունաբերության ռացիոնալ տեղաբաշխում երկրում, արտադրության ռացիոնալ միաձուլում և կենտրոնացում փոքրաթիվ խոշորագույն ձեռնարկությունների մեջ, երիտասարդ սովետական հանրապետության ապահովում սեփական հումքի և արդյունաբերական արտադրանքի բոլոր ամենագլխավոր տեսակներով, արդյունաբերության, տրանսպորտի ու գյուղատնտեսության էլեկտրիֆիկացում՝ ցածրորակ ածխի, տորֆի, ջրային էներգիայի ու քամու էներգիայի օգտագործման բազայի վրա։

Այս ամենը Ռուսաստանի հետամնաց ժողովրդական տնտեսության վերափոխման սոցիալիստական պլանի առաջին նախանշումներն էին։ Դրանք իրենց հետագա կոնկրետացումն ու զարգացումը գտան Ռուսաստանի էլեկտրիֆիկացման հոչակավոր պլանի՝ ԳՈԷԼՌՈ-ի պլանի մեջ, որը Լենինը բնորոշում էր որպես «կուսակցության երկրորդ ծրագիր»։

Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ իշխանության գլուխ անցած բանվոր դասակարգը, երկրի բոլոր հարստությունները դարձնելով համաժողովրդական, սոցիալիստական սեփականություն, կարճ ժամանակամիջոցում վերականգնելով առաջին համաշխարհային պատերազմի ու քաղաքացիական կռիվների տարիներին քայքայված ժողովրդական տնտեսությունը, ձեռնամուխ եղավ մեր երկրի սոցիալիստական պլանաչափ վերակառուցմանը։

Սոցիալիստական հասարակարգի ամենակարևոր, ամենաբնորոշ հատկանիշներից մեկը, տնտեսության սոցիալիստական սիստեմի կարևորագույն առավելություններից մեկը նրա պլանայնությունն է։ Պլանային տնտեսությունը ապահովում է ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման հիշտ փոխհարաբերությունը, թույլ չի տալիս նրանց անհամաչափ զարգացումը։ Մեր երկրի ողջ տնտեսական կյանքը որոշում և նրան ուղղություն է տալիս պետական միասնական պլանը, որը խարսխված է սովետական հասարակարգի տնտեսական զարգացման օրենքների վրա։ ՍՍՀՄ էկոնոմիկան զարգանում է ընդլայնված սոցիալիստական վերարտադրության օրենքների համաձայն, որը նշանակում է արտադրության անշեղ աճ ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում, ծանր արդյունաբերության գերակշռող աճի պայմաններում, սոցիալիստական կուտակման անընդհատ մեծացում և աշխատավորների նյութական բարեկեցության հաբատև վերելք։

Միմիայն սոցիալիստական, պլանային տնտեսության ընձեռած առավելությունների շնորհիվ էր, որ մեր ժողովուրդը կարողացավ պատմական կարճատև ժամանակամիջոցում հսկայական թռիչք կատարել՝ իր հետամնաց գյուղատնտեսական երկիրը դարձնելով հզոր, առաջավոր ինդուստրիալ-կոլտնտեսային տերություն, հաջողությամբ կառուցեց սոցիալիզմը և ետ մղեց ու ջախջախեց գերմանա-ֆաշիստական հորդաներին։ Հենց այդ առավելությունների շնորհիվ էր, որ սովետական ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմից հետո կարողացավ շատ կարճ ժամկետում լիովին վերականգնել պատերազմի հետևանքով քայքայված շրջանների տնտեսությունը, մեծացնել մեր երկրի պաշտպանական հզորությունը, տնտեսական բոլոր նախապայմանները ստեղծել սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու համար։

Սովետական Միության ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցմանը զուգընթաց իրականացվել և իրականացվում է մեր երկրի բնության սոցիալիստական վերափոխումը։ Արտադրության բոլոր հիմնական միջոցների, այդ թվում նաև բնական հարստությունների մասնավոր

սեփականության վերացման շնորհիվ մեր երկրում վերջ դրվեց բնական ռեսուրսների գիշատիչ ու կամայական օգտագործմանը, և նախապայմաններ ստեղծվեցին այդ հարստությունները պլանավորված ու կոմպլեքսային ձևով ամբողջ հասարակության շահերին ի սպաս դնելու համար, երկրի բնության սոցիալիստական վերափոխման համար։ Հոկտեմբերյան հեղափոխության արգասիքներից մեկն էլ այն էր, որ նրա շնորհիվ նոր փոխհարաբերություններ ստեղծվեցին հասարակության և բնության միջև, պայմաններ ստեղծվեցին բնության վրա մարդկանց ակտիվ, հետևողական, գիտակցված ու պլանաչափ ներգործման համար, բնության ուժերի առավել նպատակահարմար ու ռացիոնալ փոփոխման և օգտագործման համար, բնությանն այնպիսի վերափոխման համար, որը ելնում է ամբողջ ժողովրդի շահերից, նրա հետագա զարգացման շահերից և իրականացվում է սոցիալիստական էկոնոմիկայի օբյեկտիվ օրինաչափությունների հիման վրա։ Սոցիալիստական հասարակարգում բնությանն վերափոխումը, նրա ուժերի ու հարստությունների օգտագործումը և ենթարկումը հասարակության շահերին հանդիսանում են որակապես նոր մի պրոցես, որի գոյությունը հնարավոր չէ որևէ այլ հասարակարգում։

Արտադրության անարխիայի և կապիտալիստական մրցակցության հետևանքով բուրժուական հասարակարգը անխուսափելիորեն առաջ է բերում ոչ միայն միլիոնավոր մարդկանց աշխատանքի, այլև հասարակության տեխնիկական միջոցների չափազանց շռայլ ու անարտադրողական ծախսում։ Կապիտալիզմը, հատկապես իր զարգացման իմպերիալիստական փուլում, տառապում է ագահությամբ ու շռայլությամբ։ Գիշատչությունը, ագահությունն ու շռայլությունը ընկած են նրա հիմքում, և դրանի դեռ նաև չի ոչնչացված, կշարունակի նախկինի պես վատնել հասարակության նյութական ու հոգևոր արժեքները՝ իր նեղ-եսասիրական դասակարգային շահերի համար։ Կապիտալիզմի օրոք ստեղծվել են նյութական ու կուլտուրական խոշոր արժեքներ. մի շարք կապիտալիստական երկրներում կա չափազանց բարձր զարգացած տեխնիկա, հայտնաբերված են բնական մեծ հարստություններ։ Բայց իր դարն ապրած կապիտալիստական կարգերը, որոնք հիմնված են մասնավոր սեփականության և արտադրության անարխիայի վրա, այդ երկրների էկոնոմիկան դարձրել են անկայուն ու պարբերական փլուզումների ենթակա, որոնցից ելք գտնելու համար այդ երկրների իշխող դասակարգերը դիմում են իմպերիալիստական նոր պատերազմներ հրահրելուն, գաղութային թալանին, ռազմական հիստերիային և ողջ արտադրությունը ռազմական ռելսերի վրա փոխադրելուն։

Սովետական սոցիալիստական հասարակարգում, որտեղ գոյություն չունի անտագոնիզմ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև, ամենալայն հնարավորություններ են ստեղծված արտադրողական ուժերի զարգացման համար։ Դրա շնորհիվ սոցիալիստական հասարակարգը զարգանում է անընդհատ, պատմության մեջ չտեսնված տեմպերով, ազատ լինելով տնտեսական ճգնաժամերից և արտադրողական ուժերի ու նյութական բարիքների վատնումից։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացումը ենթարկված է մեր երկրի բոլոր աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման շահերին, սոցիալիստական տնտեսության և առաջին հերթին ծանր ինդուստրիայի անշեղ զարգացման շահերին, երկրի պաշտպանունակության ամրապնդման շահերին։ Նա հետապնդում է մեր հայրենիքի բոլոր շրջանների, մասնավորապես անց-

յալում հետամնաց ծայրամասերի զարգացումը, սոցիալիզմի հայրենիքի տնտեսական հզորության անընդհատ վերելքը, սոցիալիզմի, խաղաղության և դեմոկրատիայի լագերի ամրապնդումը, կոմունիզմի մեծ գործի հաղթանակը:

Տնտեսական զարգացման բնագավառում մեր երկրի ձեռք բերած հաջողություններին զուգահեռ, անցած տասնամյակների ընթացքում բուռն տեմպերով զարգանում ու բարգավաճում էին սովետական գիտությունն ու տեխնիկան: Սովետական գիտնականները հաջողությամբ կատարում են իրենց առաջ կանգնած հիմնական խնդիրը՝ կարճ ժամկետում հասնել և գերազանցել արտասահմանյան գիտության ու տեխնիկայի նվաճումները:

Ի հակադրություն կապիտալիստական կարգերի, տնտեսության սոցիալիստական սիստեմում չկան այնպիսի անհաղթահարելի խոչընդոտներ, որոնք խանգարեին գիտության ու տեխնիկայի բոլոր նվաճումները համապետական մասշտաբով պլանաչափ կերպով արտադրության մեջ ներդնելու գործին: Սովետական սիստեմը այդ գործի համար բաց է անում ամենալայն հնարավորություններ, լիակատար ազատություն է տալիս առաջավոր գիտության, տեխնիկայի ու կուլտուրայի ծաղկմանը: Սոցիալիստական մեր պետությունը առավել բարենպաստ պայմաններ է ստեղծում գիտության ու տեխնիկայի զարգացման համար: Իրենց անշեղ վերելքով սովետական գիտությունն ու տեխնիկան ամեն կերպ օժանդակում են կոմունիզմի տեխնիկա-տնտեսական բազայի ստեղծման ու ամրապնդման գործին: Սովետական առաջավոր գիտությունը հաղարավոր թելերով կապված է մեր երկրի կյանքի հետ: Նա անընդհատ առաջ է շարժվում, անխնա ոչնչացնելով բոլոր հնացած նորմաներն ու տրադիցիաները, չհանդուրժելով որևէ հետամնացություն և անտարբեր վերաբերմունք նորի ծիլերի նկատմամբ, համարձակորեն նայելով դեպի ապագան: Առաջավոր այդ գիտությունն ու տեխնիկան ամենալայն հնարավորություններ են ստեղծում մեր երկրի անբավ բնական հարստությունները ժողովրդի շահերին ծառայեցնելու համար:

Սոցիալիստական շինարարության բնագավառում մեր երկրի ձեռք բերած խոշորագույն նվաճումները միաժամանակ հանդիսանում են խաղաղության մեր անխախտ ձգտման վառ արտահայտությունը, խոսքը ավանդ՝ համաշխարհային խաղաղության մեծ գործում: Սովետական ժողովրդի այդ հաջողությունները ոգեշնչում են խաղաղության բոլոր կողմնակիցներին ամբողջ աշխարհում՝ ավելի ևս ակտիվորեն պայքարելու հանուն խաղաղության, ընդդեմ իմպերիալիստական զավթողական պատերազմի: Միաժամանակ դա հանդիսանում է այն գաղափարների վեհության և իսկական հումանիստական բնույթի արտահայտությունը, որոնցով ղեկավարվում են սովետական մարդիկ, ինչպես նաև կապիտալիստական հասարակարգի համեմատությամբ սովետական կարգերի մեծագույն առավելությունների արտահայտությունը:

Անցած տասնամյակների ընթացքում արմատական տեղաշարժեր կատարվեցին նաև սովետական մարդկանց հոգեբանության մեջ: «Տնտեսական ու քաղաքական վերափոխումները խոր փոփոխություններ առաջացրին հասարակական գիտակցության մեջ, հաստատվեց սովետական հասարակության գաղափարական միասնությունը: ...Երկրում աճել են մարդկանց սերունդներ, որոնք դաստիարակված են կոմունիստական իդեալներին անսահման նվիրվածության ոգով, համոզված են մեր մեծ գործի արդարությանը: Կոփվել է սո-

վետական մարդու՝ մարտիկի, հեղափոխականի, գիտակից աշխատավորի բնավորությունը»[15]։

Մեր երկիրը ներկայումս բոլոր բարենպաստ պայմաններն ունի իր հիմնական տնտեսական խնդիրը՝ կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը իրականացնելու համար։ Դրանցից ամենագլխավորը Սովետական Միության հսկայական չափերով աճած տնտեսական հզորությունն է։ Ոչ պակաս կարևոր հանգամանք է և այն, որ այդ խնդրի լուծումը իրականացվում է սոցիալիստական երկրների միացյալ ու հզոր լագերի առկայության պայմաններում։ Խիստ մեծ է նաև սովետական ժամանակաշրջանում աճած, մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքով ղեկավարվող կադրերի հսկայական բանակի գոյությունը՝ այդ համաշխարհային-պատմական խնդրի իրականացման համար։ Ինչպես նշված է ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումների մեջ, այդ հիմնական առավելությունները մեր երկրին հնարավորություն են տալիս պատմական ամենակարճ ժամկետներում հասնել և առաջ անցնել տնտեսապես առավել զարգացած կապիտալիստական երկրներից՝ նաև բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի ծավալի տեսակետից։

Անցումը սոցիալիզմից դեպի կոմունիզմ մի հսկայական սոցիալական հեղաշրջում է, որն իրականացվում է մեր հասարակարգի զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների հիման վրա։ Սովետական ժողովուրդը լիովին ի վիճակի է իրականացնել այդ անցումը, քանի որ նա ղեկավարվում է կոմունիստական հասարակարգը կառուցելու վեհ գաղափարներով, իր աշխատանքների հսկայական ծավալը զուգակցում է զարգացման բարձր տեմպերի հետ, իսկ իր առջև դրված խնդիրների գիտական խորը հիմնավորումը՝ միլիոնավոր սովետական մարդկանց ստեղծագործական աշխատանքի հետ։

* *

Հոկտեմբերյան հեղափոխությունն ու նրա շնորհիվ սկսված պատմական նոր էպոխան խորացրին կապիտալիզմի համընդհանուր ճգնաժամը, այդ թվում նաև ողջ բուրժուական գաղափարախոսության ճգնաժամը։ Սոցիալիստական հեղափոխության փորձի լույսի տակ բացահայտվեց այն տնտեսական, քաղաքական ու սոցիոլոգիական տեսությունների իսկական արժեքը, որոնք կապիտալիզմը դիտում ու ներկայացնում էին որպես մի հասարակարգ, որով ավարտվում է սոցիալական զարգացման պրոցեսը։

Սովետական հեղափոխության փորձը, որ անցած տասնամյակների ընթացքում հսկայական ազդեցություն է ունեցել համաշխարհային հեղափոխական շարժումների վրա, առաջ է բերել պատմության մեջ չտեսնված գաղափարական-քաղաքական պայքար, որը կապված է շահագործողական դասակարգերի դեմ աշխատավորների այդ խոշորագույն հաղթանակի գնահատման հետ։ Հակակոմունիզմի գաղափարախոսները ձգտել են և ձգտում են թերագնահատել բանվոր դասակարգի՝ որպես աշխարհի հեղափոխական վերափոխման գլխավոր ուժի համաշխարհային-պատմական գերը, խեղաթյուրել 1917 թ. հոկտեմբերին սկսված նոր դարաշրջանի էությունը, սքողել այն սոցիալական շարժումների բնույթը, որոնք մեր օրերում կատարվում են աշ-

15 Թեզիսներ, էջ 65։

խարհի ամենատարբեր երկրներում։ Ու թեպետ բուրժուական որոշ տեսաբաններ ստիպված խոստովանում են Հոկտեմբերի գաղափարների աճող ազդեցությունը համաշխարհային կյանքում, այնուամենայնիվ սովետական կարգերի տենդենցիոզ քննադատները հսկայական ջանքեր են գործադրում կասկածի տակ դնելու Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալիստական բնույթը։

Նման տենդենցը առկա էր դեռևս 20-ական թվականներին, երբ բուրժուական շատ «տեսաբաններ» պնդում էին, թե Հոկտեմբերյան հեղափոխությունը լոկ հետևանք է Ռուսաստանի ժողովուրդների յուրահատուկ բնավորության. ժողովուրդներ, որոնք «տատանվում են հիասթափության լեթարգիայի և մարտարեական էքստազի միջև»։ Ուրիշները այն կարծիքին էին, թե Ռուսաստանը «դեռևս պատրաստ չէ սոցիալիստական պետության նման ինչ-որ բան ստեղծելու», իսկ եթե անգամ առկա են հասարակության սոցիալիստական վերափոխման ինչ-որ հաջողություններ, ապա դրանք, միևնույնն է, «կապված չեն ժողովրդի շահերի հետ»[16]։

Ավելի ուշ բուրժուական տեսաբանները առաջ քաշեցին այն տեսակետը, թե Հոկտեմբերյան հեղափոխությունը հետևանք էր «մարդկային հոգու իռացիոնալ ուժերի և դիվային ինստինկտների ապստամբության»[17], իսկ որոշ հեղինակներ ձգտում էին ապացուցել «հեղափոխության վերնախավային բնույթը». հավատացնել, թե հեղափոխությունը հետևանք էր լոկ կուսակցական-քաղաքական պայքարի, որի ընթացքում «ռուս ժողովրդի մեծամասնությունը չէր օժանդակում բոլշևիկների կուսակցությանը»[18]։

Դրա հետ միասին, բուրժուական գիտնականներից շատերը ձգտում են նվազեցնել Հոկտեմբերյան հեղափոխության փորձի համաշխարհային-պատմական նշանակությունը։ Այդ տեսակետից առավել բնորոշ է, օրինակ, այն տեսակետը, թե «ռուսական հեղափոխությունը ոչ թե համաշխարհային հեղափոխական տենդենցի արտահայտությունն էր, այլ մի տիպիկ ազգային եղելություն», «սպեցիֆիկ ռուսական շարժում, միայն ռուսական հասարակության արգասիք»[19]։

Սակայն ինչքան ավելի լայնորեն ու ավելի հաջողակ է ծավալվում համաշխարհային հեղափոխական շարժումը, այնքան ավելի է մարդկությունը համոզվում Լենինի այն խոսքերի իմաստությանը, թե Հոկտեմբերյան հեղափոխությունը հսկայական միջազգային նշանակություն ունի ոչ միայն շնորհիվ այն հանգամանքի, որ հետզհետե մեծանում է սովետական պետության հաջողությունների ազդեցությունը աշխարհի բոլոր ժողովուրդների վրա, այլև այն տեսակետից, որ Հոկտեմբերյան հեղափոխության որոշ հիմնական, բնորոշ գծեր անխուսափելիորեն կրկնվելու են համաշխարհային մասշտաբով[20]։ Եվ միայն հակակոմունիզմի գաղափարախոսների դասակարգային հակակրանքն ու կոմունիզմի նկատմամբ նրանց ատելությունն է, որ թելադրում է

---

[16] Տե՛ս Зарубежная литература об Октябрьской революции ժողովածուն, М., 1961, էջ 18, 12, նաև Критика новейшей буржуазной историографии ժողովածուն, М., 1962, էջ 10։

[17] G. v. Rauch. Geschichte des Bolschewistischen Rußland. Wiesbaden, 1955, էջ 158։

[18] У. Черчилль, Мировой кризис. Пер. с англ., М., 1932, էջ 5—6։

[19] R. Daniels. The Nature of Communism. N. Y., 1962, էջ 177—178։

[20] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 5։

բուրժուական տեսաբաններին ժխտել այն անվիճելի փաստը, որ պատմության մեջ առաջին հաղթական սոցիալիստական հեղափոխությունը ունիվերսալ նշանակություն ունի և որ այդ հեղափոխության կարևորագույն հատկանիշները այլ բան չէին, քան եթե մեր դարաշրջանի հասարակական զարգացման բնորոշ օրինաչափությունների արտացոլումը։

Մեր երկրում սոցիալիստական հեղափոխությունը հնարավոր դարձավ շնորհիվ այն բանի, որ հեղափոխական ճանապարհով վերացվեցին բուրժուա-կալվածատիրական կարգերը և մասնավոր սեփականության վրա խարսխված արտադրահարաբերությունները։ Սոցիալիզմը մեզ մոտ իրականություն դարձավ հասարակության սոցիալիստական բազիսի և դրան համապատասխան վերնաշենքի ստեղծման հետևանքով, իսկ զարգացման այդ ճանապարհը ցույց էր տվել մարքսիզմ-լենինիզմը։ Մեր երկրի զարգացման կեսդարյա պատմությունը գործնականում ապացուցեց մարքսիզմ-լենինիզմի նաև այն դրույթի ճշմարտացիությունը, թե անցումը հասարակության զարգացման ավելի ցածր ստադիայից դեպի նրա ավելի բարձր ստադիան հանդիսանում է սոցիալական հեղափոխություն, թռիչքաձև անցում դեպի նոր, ավելի բարձր վիճակը։

Սոցիալական ամեն մի տեսության միակ անսխալական դատավորը պատմությունն է։ Անցած հինգ տասնամյակների պատմությունը հավաստեց այն, ինչ կանխատեսել էր Լենինը։ Ռուսաստանի հետևից, ասում էր Լենինը, զարգացման նրա ճանապարհով, որ բաց է արել Հոկտեմբերյան հեղափոխությունը, կգնան ուրիշ ժողովուրդներ։ Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու նրանց ձևերն ու մեթոդները կարող են տարբեր լինել, սակայն բոլոր դեպքերում Հոկտեմբերի փորձը, «ռուսական օրինակը բոլոր երկրներին ցույց է տալիս ինչ-որ բան, այն էլ չափազանց էական բան նրանց անխուսափելի և մոտալուտ ապագայից»[21]։

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նախապայման հանդիսացավ այն բանի, որ XX դարի երկրորդ կեսին սոցիալիզմը, իմպերիալիզմի դեմ՝ հանուն խաղաղության, դեմոկրատիայի և առաջադիմության պայքարող ուժերը դարձել են համաշխարհային զարգացման ընթացքը որոշող հիմնական գործոն։ «Հոկտեմբերյան հեղափոխության կողմից սահմանված՝ մարդկության պատմական զարգացման հիմնական տենդենցը հաստատվեց ամուր կերպով. նրա գլխավոր բովանդակությունը, գլխավոր ուղղությունը և գլխավոր առանձնահատկությունները այժմ բնութագրում են համաշխարհային սոցիալիստական սիստեմը, իմպերիալիզմի դեմ, հասարակության սոցիալիստական վերակառուցման համար պայքարող ուժերը»[22]։

Մեր երկրում Հոկտեմբերի հաղթանակով սկսված շարժումը հանգեցրեց հոյակապ արդյունքների։ Այն իդեալը, որ դարերի ընթացքում լոկ ուտոպիական երազանքների օբյեկտ էր, դարձավ Հոկտեմբերին ծնված նոր հասարակարգի նպատակն ու պրակտիկ գործունեության խնդիրը։ Դրանով իսկ սկսվեց մի նոր դարաշրջան, որը նշանավորում է մարդկության իսկական պատմության սկիզբը։

---

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 6։
22 Թեզիսներ, էջ 70։